



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 184-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ «ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործով դիմողի կողմից ներկայացված միջնորդությունները, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2021 թվականի հուլիսի 2-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումը: 2021 թվականի հուլիսի 9-ին դիմողը ներկայացրել է միջնորդություն՝ խնդրելով որպես գործի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող նյութ ընդունել միջնորդությանը կից ներկայացված՝ «2021թ. հունիսի 20-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին նախընտրական քարոզչության ժամանակ օգտագործված հռետորաբանության ազդեցությունը ընտրողների հոգեբանության և վարքագծի վրա՝ փորձագիտական եզրակացություն» վերտառությամբ նյութը: Գործի դատաքննության ընթացքում դիմողը միջնորդել է նաև միջնորդությանը կից ներկայացված փորձագիտական եզրակացություն կազմած մասնագետին ներգրավել գործին որպես փորձագետ կամ վկա:

2. Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն ենթակա է **մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրական դատարանը, քննության առարկա դարձնելով ներկայացված միջնորդությունը, արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատավարությանն իր համաձայնությամբ որպես փորձագետ կարող է ներգրավվել այն անձը, որը քննվող գործին առնչվող հարցերով օժտված է հատուկ գիտելիքներով և շահագրգռված չէ գործի ելքով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշում է փորձագետի եզրակացություն պահանջող հարցերի շրջանակը: Այլ կերպ, Սահմանադրական դատարանն է ներգրավում փորձագետ, ընդ որում՝ միայն վերջինիս համաձայնության դեպքում և, Սահմանադրական դատարանն է որոշում փորձագետի եզրակացություն պահանջող հարցերի շրջանակը՝ գործին դրանց հնարավոր առնչության չափանիշով: Քննարկվող դեպքում առկա չեն այնպիսի հարցեր, որոնք Սահմանադրական դատարանն անհրաժեշտ կհամարեր ներկայացնելու փորձագիտական եզրակացության:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Սահմանադրական դատարանը նիստին որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց ցուցմունքները, որոնց կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ փաստ: Վկա հրավիրելու վերաբերյալ կողմի միջնորդությունը Սահմանադրական դատարանը կարող է մերժել պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ:

Խնդրո առարկա հոդվածի վերլուծությունից բխում է, որ անձը Սահմանադրական դատարանում գործով վկայի դատավարական կարգավիճակ կարող է ձեռք բերել այն դեպքում, երբ վերջինիս ցուցմունքներով հնարավոր է բացահայտել գործով պարզման ենթակա որևէ փաստ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի միջնորդության մեջ մատնանշված անձին որպես վկա ներգրավելը հիմնավորվում է ոչ թե գործով պարզման ենթակա որևէ փաստի առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկություն ստանալու, այլ դրա վերաբերյալ հատուկ մասնագիտական (հոգեբանական) վերլուծություն (փորձաքննություն) կատարելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործով դիմողի կողմից ներկայացված միջնորդությունները մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 հուլիսի 2021 թվականի
ՍԴԱՌ-157